732 Մեկ խոսքով ես Դու արարել երկինքը

1. Մեկ խոսքով ես Դու արարել երկինքը
Ու երկիրը՝ պատել ծով ու ցամաքով:
Դարեր հետո երկիր եկավ Կյանքն Ինքը,
Հոժարաբար խաչը ելավ Քո կամքով:

Երկայնամիտ, բազումողորմ մեր Աստված,
Հավերժության ու փառքի մեջ բնակվող,
Օվկիան սիրո, սեր պարգևող Տեր Աստված,
Այս խավար ու մութ աշխարհին կյանք տվող:

2. Օրհնյալ է Քո փառավորյալ Անունը
Ու շատ բարձր օրհնությունից, գովեստից:
Տեր Հիսուսի սուրբ ու անբիծ Արյունը
Մաքրել է մեզ ամեն տեսակ մեղքերից:

3. Օրհնյալ Հոգիդ թող մեր մեջ Իր գործն անի,
Տկարներին ընկած տեղից վեր հանի:
Արդարության հանդերձ հագած գառներին
Մեր Հովիվը թող գա շուտով տուն տանի: